

ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ
(Պարսկաստան)

ՍՈՒՐԲ ԹԱԴԵԻ ՎԱՆՔԸ

Ա. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Համաձայն հայկական պատմական աշխարհագրության Ս. Թադեի վանքը գտնվում է Արտապ գավառի հյուսիսում: Արտապը Վասպուրական նահանգի գավառներից մեկն էր, որի հյուսիսային կողմից ձգվում է Մասյաց գավառը, արևմուտքից սահմանակից էր Կոգովիտի հետ, հարավից Մարդաստան ընդարձակ շրջանի հետ, որ տարածվում է Արճակ լճից մինչև Արտապ: Վերջինս արևելքից հասնում է մինչև Արաքս գետը:

Մովսես Խորենացու հիշատակության համաձայն՝ այս գավառը նախապես կոչվել է Շավարշան կամ Շավարշական ու Արտապ անունն ստացել է այն ժամանակ, երբ Արտաշես Բ-ի (34—20 մ. թ. ա.) հրամանով Սմբատ Բագրատունի սպարապետը այնտեղ է բնակեցնում Կովկասյան Ալանաց երկրից բերած գերիներին:

Արտապ գավառն իր տարածքով համապատասխանում է Իրանի այժմյան Ատրպատական նահանգի Մակուի շրջանին, որ տարածվում է Արարատ լեռան ստորոտից դեպի հարավ-արևելք: Նախկինում պատկանում էր Ամատունի հայ իշխանական տան, իսկ հետագայում անցնում է Վասպուրականի Արծրունյաց նախարարներին:

Պատմական Արտապ գավառը բնակված է եղել, ինչպես վկայում են հայ հինգերորդ և հետագա դարերի պատմագիրները, հայ հոծ ազգաբնակչությամբ: Արաբական, նրան հետևող սելջուկյան, մոնղոլական, մանավանդ Թեյմուր Լենգի արշավանքները և ապա օսմանյան և պարսկական երկար տարիների պատերազմները, որոնց ընթացքին հատկապես քրիստոնյա հայությունը անպատմելի կորուստներ և զրկանքներ կրեց, պատճառ եղան, որ աստիճանաբար նոսրանա հայ ազգաբնակչության թիվը այս գավառում:

Մակուի գավառը գրեթե դատարկվեց հայությունից 1828 թվականին: Մակուի գավառի և Ս. Թադեի շրջապատում գտնվող գյուղերի[1] ազգաբնակչությունը լքեց իր հայրենի գյուղերը և միացավ գաղթող հայության: Մակու քաղաքում և այս գավառի տարբեր մասերում մինչև այժմ էլ պահպանվել են հայկական բազմաթիվ լքված կիսավեր վանքեր և եկեղեցիներ:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ ներքին հեղափոխության հետևանքով ռուսական բանակները լքեցին թուրքական ռազմաճակատը, դեպի Կովկաս արշավող օսմանյան բանակները կոտորեցին Թադեի վանքի շրջակայքում մնացած հայության: Նրանց վերջին բեկորները, որոնց հաջողվել էր ճողոպրել կոտորածից, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1946 թվականին փոխադրվեցին Խորհրդային Հայաստան:

Բ. ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Թադեի վանքի հիմնումը հայկական ավանդությամբ կապվում է մեր թվագրության առաջին դարին: Կարելի է նույնիսկ

[1] Այս գյուղերից մի քանիսը վանքին էին պատկանում:

Ս. Թադեի վանքի ընդհանուր տեսքը
(Յուղաներկ)

ասել, որ այս մենաստանը համարվում է քրիստոնեական կրոնի առաջին հաստատությունը պատմական Հայաստանում: Համաձայն այդ ավանդության, Քրիստոսի երկու աշակերտները՝ Թադեոս և Բարթողիմեոս Առաքյալները, 40—41 թվականին կրոնական քարոզչության համար Պաղեստինից անցնում են Եդեսիա և այնտեղից Հայաստան: Ըստ պատմագիր Մովսես Խորենացու, Հայաստանի այդ տարիների թագավոր Աբգարը (ըստ ոմանց՝ Եդեսիո թագավոր), որպես առաջինը իր ժամանակակից իշխանավորներից, ընդունում է քրիստոնեական կրոնը և նպաստում նրա տարածմանը:

Համաձայն հայ պատմագիրների, Բարթողիմեոսը քարոզչական կենտրոն ընտրել է Վասպուրական նահանգի Անձևացյաց գավառը, ուր իբր կործանելով հայ հեթանոսական կրոնի Անահիտ աստվածուհու մեհյանը, հիմնել է քրիստոնեական Հոգիաց վանքը: Ավանդվում է, որ նա քարոզել է նաև Գողթան և Աղբակ գավառներում, որտեղ և նահատակվում է Սանատրուկ թագավորի հրամանով և Աժդահակ իշխանի ձեռքով 44 թ.: Աղբակի գավառում գտնվում է Ս. Բարթողիմեոսի հոյակապ վանքը, որտեղ մի տապանաքարի վրա քանդակված է Բարթողիմեոս Առաքյալի ունունը: Մի այլ ավանդության համաձայն, Բարթողիմեոս Առաքյալի նշխարները գտնվում են Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքում:

Սանատրուկի հալածանքներին կոհ է գընում նաև Թադեոս Առաքյալը, որ այդ ժամանակ քարոզում էր Արտաշ գավառում: Սանատրուկը չի խնայում նաև իր հարազատ դստեր՝ Սանդուխտ կույսին, երբ վերջինս մերժում է թագադիր հոր պահանջը՝ քրիստոնեական կրոնից հրաժարվելու: Այս երկու նահատակների շարքին հայ պատմագիրները հիշում են նաև Առաքյալի աշակերտ Իսրայել Կրոնավորի անունը:

Քրիստոնեական կրոնին հավատարիմ մնացած հետևորդները նահատակ Առաքյալի աճյունները ամփոփում են ներկա Ս. Թադեի վանքում, իսկ Սանդուխտ կույսին հողին են հանձնում վանքին մոտակա մի առանձին դամբարանում: Թադեոս Առաքյալի հիշատակին նվիրված ներկա Ս. Թադեի վանքը կառուցվել է հավանորեն քրիստոնեական կրոնը Հայաստանում պաշտոնական դավա-

նանք ճանաչվելուց հետո և մի շարք անգամներ վերակառուցվել հետագա տարիներին:

Տեղի հայությունը ավանդաբար հավատում է, որ Թադեոս Առաքյալի գերեզմանը գտնվում է վանքի աջ կողմի խորանում, իսկ Սանդուխտ կույսի գերեզմանի վրա կառուցած մատուռը վանքին կից բլուրի վրա է գտնվում:

Անշուշտ ավանդությունն ու իրական պատմությունը շատ են խճճվել միմյանց հետ, բայց ակներև է այն իրողությունը, որ Քրիստոսի այս երկու երիտասարդ աշակերտները գործել և նահատակվել են պատմական Հայաստանի հողի վրա: Որոշ չէ նրանց հիշատակին կառուցած վանքերի, այլև Ս. Թադեի հիմնման ճշգրիտ թվականը: Որոշ է, սակայն, որ Արտավ գավառը, դեռևս չորրորդ դարում կրոնական կարևոր թեմ է եղել և իր առաջնորդներն է ունեցել, որոնցից հիշվում են Ստեփան Վարդապետը և նրան հաջորդող Իսրայել եպիսկոպոսի անունները: Այս վանքը որպես Թադեոս Առաքյալի նահատակության հիշատակին կառուցված սրբատեղի, ամեն տարի հավարավոր հավատացյալների ուխտատեղի է եղել ու առաջնորդությունն էլ հայոց եկեղեցական կազմակերպության մեջ կարևոր դեր է ունեցել: Այնուհետև տեղեկությունները պակասում են մինչև ութերորդ դարի պատմագիր Զենոբ Գլակը, որ իր «Պատմութիւն Տարօնոյ» գրքի մեջ հիշատակում է, որ Արտավ գավառում հանգչում են Ս. Թադեոս Առաքյալի նշխարները[2]:

Շատ համառոտ կերպով Թադեի վանքի մասին հիշատակություն պահպանել է նաև Ժ դարի հայ նշանավոր պատմագիր Թովմա Արծրունին:

Վանքի մասին ԺԱ դարում գրված հիշատակարանում ասված է, որ Թադեին ենթակա թեմի առաջնորդը Էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսությանց միջև եղած վեճի ժամանակ իր կողմնակցությունն է հայտնել Աղթամարի կաթողիկոսության[3]:

ԺԳ դարում՝ 1231 թվականին, մոնղոլների հրոսակները ավերում են վանքը: Պատմագիր Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Հովհաննես Վանականի աշակերտ Հովսեփ վարդապետը ժամանակի հայոց Կոնստանտին կաթողիկոսի կարգադրությամբ և մոնղոլական խանի թույլտվությամբ 1247—1250 թթ. վերականգնում է Թադեի վանքը: Կոնստանտին կաթողիկոսը իբրև թեմ, Թադեի վանքն է տալիս նրան շրջակա մի քանի գավառներն ու քաղաքները և նյութական սեծ աջակցություն կատարում՝ վերանորոգելու և բարեկարգ վիճակ ստեղծելու այդ վանքի համար, «որպեսզի Թադեոս Առաքյալի աճյունները ամփոփող այս մենաստանին անհրաժեշտ խնամք տարվի»: Շնորհիվ նյութական և բարոյական աջակցության, վանքը միաժամանակ շատ ծաղկած վիճակ է ապրում և օգտակար գործունեություն ունենում:

Ս. Թադեի վանքի շատ կարևոր ուխտատեղի և կրոնական կենտրոն լինելու հանգամանքը հատկապես վկայում է այն, որ Կիլիկիո Հայոց թագավոր Լևոն Գ-ը մոնղոլական Արղուն խանի և իր քաղաքական բանակցությունների համար դեպի Ատրպատական կատարած ճամփորդության ժամանակ այցելում է ժամանակի հայտնի գիտնական Թորոս փիլիսոփային այս մենաստանում, տեսակցություն է ունենում թեմի առաջնորդ և վանահայր Տեր Տիրացու եպիսկոպոսի հետ, որ այդ դարի հայ ականավոր հոգևորականներից էր[4]:

Թադեի վանքի մասին տեղեկություններ ունի նաև ԺԳ դարի նշանավոր պատմագետ, գիտնական և բժիշկ Վարդան Արևելցին:

Ըստ ԺԳ—ԺԴ դդ. պատմագիր Ստեփանոս Օրբելյանի պահպանած տեղեկության, այս հնամենի վանքը 1924—1925 թվականներին հարձակման է ենթարկվում (Նովրոզ) Նովրուզ անունով թաթար վորապետի կողմից, մենաստանը և վանականների խուցերը կողոպտելուց և ավերելուց հետո հրոսակները ծանր տանջանքների են ենթարկում վանահայր Տիրացու եպիսկոպոսին[5]:

Վանքի հետագա դարերի պատմության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ են պահպանված հայ մատենագրության և կրոնական ձեռագիր հիշատակարանների մեջ: Շնորհիվ դրան հնարավոր է ԺԴ դարից սկսած, ժամանակագրական կարգով հետևել Արտավ գավառի առաջնորդների և վանքի վանահայրերի գործունեության, նաև՝ վանքի հետ կապված պատմական դեպքերին: Այս համառոտ ակնարկի մեջ սակայն առաջին հերթին պիտի կանգ առնենք այն առաջնորդների և վանահայրերի վրա, որոնք ջինարարական և կամ հոգևոր-մշակութային կարևոր գործունեություն են ցուցաբերել:

---

[2] **Զենոբ Գլակ**, Պատմություն Տարոնա, էջ 21:

[3] **Ս. Անեցի**, Ժամանակագրություն, էջ 124: Համեմատել **Հ. Ակինյան**, Գավավանագիրք, կաթողիկոսություն Աղթամարա, էջ 11: **Հ. Համազասպ Ոսկյան**, Վասպուրական-Վանի Վանքերը, 1942, Վիեննա, Բ մաս, էջ 468:

[4] **Հ. Հ.**, Վասպուրական-Վանի Վանքերը, Բ հատոր, էջ 470: «Արարատ» ամսագիր, 1911, էջ 223—224: Ազգագրական հանդես, № 12, էջ 155:

[5] **Ստեփանոս Օրբելյան.** Պատմություն նահանգին Սիսական, Ղուկասյան, հրատարակություն—մատենաշար, էջ 473:

Երբ Զաքարիա եպիսկոպոսը 1315 թվականին առաջնորդ ընտրվեց, ըստ պահպանված տեղեկության՝ վանքը բավական ծաղկած և բարվոք վիճակ ուներ, սակայն հաջորդ տարիներին՝ մոնղոլական ավպակային խմբերի պարբերական հարձակումների հետևանքով, կրկին անգամ ավերվում է: Ավելի ծանր հետևանք է ունենում 1319 թվականի մեծ երկրաշարժը, որի ժամանակ ոչ միայն վանքը հիմնովին կործանվում է, այլ նաև բավական մեծ թվով հոգևորականներ մնում են փլատակների տակ: Զոհված միաբանների թիվը՝ 75 հոգի[6], հաստատում է, թե որքան մեծ էր այս մենաստանում ապրող հոգևոր դասի թիվը: Զաքարիա եպիսկոպոսը սակայն չի հուսահատվում և կենդանի մնացած միաբանների և հայ համայնքի օգնությամբ նվիրվում է վանքի հիմնական վերակառուցման: Ըստ հին եկեղեցու հյուսիսային ներսի պատի վրա պահպանված արձանագրության մի նոր «լուսակիր և երկնանման» տաճարի կառուցումը տևում է 1319-ից մինչև 1329 թվականը:

Կառուցողական, շինարարական իր այս շատ օգտակար աշխատանքներին զուգընթաց Զաքարիա եպիսկոպոսը մշակութային և վարչական լայն գործունեություն է ծավալում իր առաջնորդության տարիներին:

Զաքարիա եպիսկոպոսի առաջնորդությունն ու Թադեի վանքի վանահայրությունը տևում է հավանաբար մինչև 1337 թվականը: Նրան հաջորդում է Ս. Թադեի վանահայր Տեր Տիրացու եպիսկոպոսը, որի գործունեության մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանված. հայտնի է միայն, որ նա թեմի հոգևոր գործերը և վանքի վանահայրությունը ղեկավարել է 1337-ից մինչև 1340 թվականը:

Նրան հաջորդում է վանքի միաբան Մեսրոպ վարդապետ Արտապեցին, որ հոգևոր ուսմունքների մի բարձրագույն լսարան է բացում վանքում: Վանքի մասին պահպանված գրավոր տեղեկությունների մեջ սա առաջին հիշատակությունն է այս մենաստանում տարվող կրթական և դաստիարակչական աշխատանքների մասին: Դարեր շարունակ հայ եկեղեցիներն ու վանքերն են եղել կրթական միակ օջախները և դպրոցական ու դաստիարակչական գործի առաջնորդները: Եթե մինչև այժմ եղած հոգևոր աշխատանքների մասին պատմական քիչ հիշատակություններ են պահպանված, դա պետք է բացատրել նրանով, որ մշտական հարձակումների ու կողոպուտների հետևանքով վանքի արխիվների մեջ եղած գրավոր փաստաթղթերն ու հոգևոր ստեղծագործությունները ոչնչացվում էին:

Մեսրոպ վարդապետը որպես կրոնավոր մեծ համբավ էր վայելում, որովհետև 1359 թվականին ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս[8] և Թադեից մեկնում Էջմիածին՝ ստանձնելու իրեն վստահված հայոց կրոնական կյանքի ղեկավարությունը:

Երկու տասնամյակ հետո, 1397 թվականից պահպանված տեղեկությունները հաստատում են, որ Ս. Թադեի և Արտապ գավառի առաջնորդական Աթոռին բավմել է Պողոս եպիսկոպոսը, որ հետագային 500 հոգևորականների և աշխարհականների մասնակցությամբ Էջմիածնում կայացած ժողովում ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս:

Այս դարերին հայ ժողովրդի համար ավելի ծանր պայմաններ են ստեղծվում, որովհետև մոնղոլ-թաթար ցեղերը ընդունելով մահմեդական կրոնը՝ ավելի դաժան և անհանդուրժող վերաբերմունք են ունենում իսլամական ծովի մեջ մենակ մնացած քրիստոնյա հայության հանդեպ: Հայության համար ավելի սարսափելի վիճակ ստեղծվեց, երբ Լենկթեմուրի բարբարոս հրոսակները ավերելով ու կոտորելով ներխուժեցին մեր երկիրը:

Պողոս եպիսկոպոսը կաթողիկոս ընտրվելուց և Ս. Թադեի վանքից Էջմիածին մեկնելուց հետո, մի քանի տասնամյակ վանքի մասին որևէ տեղեկություն չունենք: Ենթադրվում է, որ նրա բացակայության ժամանակ վանքի և թեմի գործերը վարել է մի կարճ ժամանակ Մխիթարիչ կրոնավորը, որի օրով 1406 թվականին արտագրվել է «Երգերգոց»-ի մեկնությունը: Նրան հաջորդում է Մակուեցի Գրիգոր եպիսկոպոս Ջալալ Բեկյանը (1440—1443), որը հետագային ստանձնում է Ամենայն Հայոց կաթողիկոսի պարտականությունը Էջմիածնում:

Համաձայն հիշատակագրությունների վկայության Զաքարիա, Սրապիոն, Մկրտիչ և Գրիգոր եպիսկոպոսների առաջնորդության ժամանակ և մի շարք ստորադաս կրոնավորների և աշխարհական բարեգործ անձանց օգնությամբ հիմնական վերանորոգության է ենթարկվել վանքը և բացվել վանքից դեպի Մակու քաղաքը տանող քառաժայռի ճանապարհը: 1574—1615 թվականների մի Ավետարանի կողքին գրված հիշատակարանից երևում է, որ այդ օրերին սույն մենաստանը բավմամարդ հոգևորականություն է ունեցել:

---

[6] Ժամանակագրություն բրոնիկ, էջ 157—165: Չամչյան, Պատմ. հայոց, Գ հատոր, էջ 317:

[7] Հայկ Աճեմյան. Ս. Թադեի վանք, Տեղագրական և պատմական ակնարկ, Ա մաս, 1959, էջ 28:

[8] Հ. Հ. Ոսկյան, անդ, էջ 475, 476: Զարբհանալյան, Պատմություն հայ դպրության, Բ, էջ 150: Չամչյան, Պատմ. հայոց, Գ, էջ 355:

ԺԶ դարի երկրորդ կեսին սկսվում են իրանա-օսմանական երկարատև պատերազմները, գլխավոր թատերաբեմ ունենալով պատմական Հայաստանի կենտրոնական գավառները: Բազմաթիվ անգամներ ձեռքից ձեռք են անցնում միմյանցից գրաված հողամասերը, և մարդկային ու նյութական շատ ծանր կորուստներ է կրում հատկապես քրիստոնյա հայությունը: 1603—1605 թվականներին Իրանի մեծագույն արքաներից և Օսմանյան պետության ամենամեծ ախոյան Շահ Աբբաս մեծի հրամանով կենտրոնական Հայաստանի գավառներից շուրջ կես միլիոն հայություն տեղահան է արվում և բռնի կերպով քշվում դեպի Իրան: Իրանական բանակները Օսմանյան հառաջացող բանակների առաջ նահանջելով, հրկիզում են տեղահան արված հայության քաղաքներն ու գյուղերը, որպեսզի իրենց հետևող տաճկական կորքերը զրկվեն կենսական միջոցներից:

Թուրք-իրանյան այս ավերիչ պայքարի տարիներին, երբ Արտավ գավառը նաև պատերազմի թատերաբեմ էր դարձել, շատ քիչ տեղեկություններ են պահպանված Թադեի վանքի մասին: Առաքել Դավրիժեցու թողած հիշատակության համաձայն՝ բազմաթիվ անգամներ կողոպտված և ավերված այս մենաստանը Էջմիածնի Փիլիպպոս կաթողիկոսի կարգադրությամբ և վանքիս վանահայր Մկրտիչ եպիսկոպոսի ու միաբանության ջանքերով 1650 թվականին հիմնական վերանորոգության է ենթարկվում: Բարեկարգվում և նորոգության է ենթարկվում նաև վանքին կից Սանդուխտ կույսի մատուռը:

Մկրտիչ եպիսկոպոսն իր առաջնորդության շրջանում, իր այս շինարարական գործունեության կուգընթաց, կատարել է նաև հոգևոր մշակութային կարևոր աշխատանքներ, որոնցից պահպանվել է միայն նրա ձեռքով գրված Ս. Թադեի և Արտավ գավառի թեմական առաջնորդների և վանահայրերի ցուցակը, սկսած Զաքարիայի (1315) առաջնորդությունից մինչև իր օրերը:

Մկրտիչ եպիսկոպոսին հաջորդում է Իսահակ Մակուեցին, որը ծնվել էր Արճեշի շրջանի Ակնաց գյուղում:

Իսահակ Մակուեցին, շարունակելով իր նախորդի շինարարական աշխատանքները, առաջին հերթին վերակառուցում է վանքի պարիսպները և օժտում ամուր և բարձր բուրգերով: Միաժամանակ շինել է տալիս վանականների վնասված խուցերը և ուխտավորների հյուրանոցները: Համաձայն 1684 թվականի գրավոր տեղեկությանց, շինարարական այդ գործերը հինգ տարի են տևում:

Իսահակ Մակուեցու շատ օգտակար գործերից պետք է համարել վանքի միաբաններին և մոտակա վանքապատկան գյուղերի ժողովրդին խմելու մաքուր ջրով ապահովելը: Դեռևս երեք դար առաջ Արտավ գավառի նշանավոր առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը 1315—1337, որը, ինչպես տեսանք, միաժամանակ համարվում է Թադեի վանքի հիմնական վերակառուցողը, մոտակա լեռան ստորոտից մի աղբյուր էր բացել և գետնածածկ խողովակներով լեռնային այս աղբյուրի սառնորակ ջուրը մինչև վանք հասցրել: Այդ ծանոթ է Կառնուտի աղբյուր անունով: Հետագային, երևի հաճախակի երկրաշարժերի և կամ անհոգատար վերաբերմունքի հետևանքով աղբյուրը միանգամայն ցամաքել էր: Ըստ Իսահակ Մակուեցու և նրա օգնական Սարգիս վարդապետ Կաֆայեցու ասության՝ միայն նրա «նշմարանքն» էր մնացել և վանքի միաբանությունը երկար ժամանակ զրկվել է խմելու մաքուր ջրից:

Շնորհիվ Իսահակ Մակուեցու ջանքերին «եղեւ գիւտ ջրմղին», այսինքն հայտնաբերվում է ակունքը և հորդառատ աղբյուրը բերվում գետնածածկ խողովակներով մինչև վանք:

Իսահակ Մակուեցու և իրեն հաջորդող Սարգիս Կաֆայեցի վանահայրերը ունեցել են նաև մշակութային և գրական գործունեություն, որոնց մասին մանրամասն հիշատակություններ են պահպանված:

Հոդվածը ծանրաբեռնելուց խուսափելով, այստեղ տալիս ենք Սարգիս Կաֆայեցուն 1691 թվից հաջորդող վանահայրերի միայն անունները. Քավեցի Հովհաննես վարդապետ, Զաքարիա Ղափանցի, Պետրոս վարդապետ, Ստեփանոս Զուղայեցի, Իսահակ Փառակեցի, Գեորգ եպիսկոպոս, Առաքել վարդապետ և Սիմեոն արքեպիսկոպոս Բզվնունի:

Էջմիածնի հոգևորականներից Սիմեոն արքեպիսկոպոս Բզվնունին 1806 թվականին որպես վանահայր Սուրբ Թադե գալուց հետո, կառուցեց ներկայիս կանգուն սպիտակ քարերով եկեղեցին՝ իր անունը հավերժացնելով հայ եկեղեցական պատմության մեջ:

Կառուցողական արվեստի տեսակետից այս նոր եկեղեցու հատակագիծը նմանվում է Էջմիածնին, իսկ արտաքինը՝ պատերի վրա կատարված հարուստ քանդակագործությունը կրում է Վասպուրական նահանգի Վանա լճում գտնվող Ախթամար կղզու Ժ դարի հայ Արծրունի թագավորների կառուցած Սուրբ Խաչ տաճարի որմնաքանդակների ազդեցությունը:

Սիմեոն Բզվնունու շինարարական այս մեծ գործը, որ սկսել էր 1810 թվականին տևեց մինչև 1820 թվականը: Անավարտ մնաց միայն կանգակատունն ու կտուրի լրացուցիչ մասը, որովհետև 1820 թվականին կաթողի-

կոսի կարգադրությամբ փոխադրվեց Գողթան գավառի Վերին Ագուլիս ավանի Սուրբ Թովմա Առաքելոց վանքի վանահայր:

1827 թվականի գարնանը պայթեց ռուս-պարսկական պատերազմը: Ռուսական բանակները կարճ ժամանակում գրավեցին լեռնային Հայաստանը, Արարատյան դաշտը Երևան քաղաքով և մտան Ատրպատական: Իրանը ստիպված եղավ ստորագրել 1828 թվականին Թուրքմենչայի դաշնագիրը: Համաձայն այդ դաշնագրի, Կովկասյան Հայաստանը անցավ Ռուսաստանին: Ըստ դաշնագրի հայերը արևելյան և արևմտյան Ատրպատականից կարող էին վերադառնալ Հայաստան՝ հայրենի հողերում բնակություն հաստատելու համար: Դատարկվեցին նաև Սուրբ Թադեի, Մակու քաղաքի շրջապատի հայկական շուրջ 80 գյուղերը: Մասսայական գաղթի հետևանքով եկամուտներից զրկված վանքը բնականաբար բավմամարդ հոգևորականություն ապրեցնել չէր կարող, և ոչ էլ նախկին դարերի ունեցած դպրոցը պահել:

Բարսեղ արքեպիսկոպոսին հաջորդող Նիկողայոս Կարբեցին 1830-ին նոր պաշտոնն ստանալուց հետո, Էջմիածնի Մայր Աթոռի համաձայնությամբ Սուրբ Ստեփանոս Նախավկայի (տե՛ս «Էջմիածին», 1985, հունվար) և Սուրբ Թադեի վանքերի առաջնորդությունները միատեղելով 1855-ին հիմնում է Ատրպատականի հայոց թեմը, կենտրոն ունենալով Թավրիզը: Սղերդցի Գեորգ ծայրագույն վարդապետ Նալբանդյանի, ապա Ռըշտունի Դանիել վարդապետ Զադոյանի ժամանակ (1899—1968) հայ ազատագրական պայքարի կենտրոններից էր նաև Սուրբ Թադեի վանքը: Վերջին վարդապետն էր Քաջբերունի Պետրոս Ղազարյանը, որ համաշխարհային պատերազմի վտանգավոր տարիներին Թավրիզ փոխադրվեց և մահացավ այնտեղ 1948 թվականին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ռուսական հեղափոխությունից հետո, ցարական բանակները լքեցին Կովկասյան ճակատը, Օսմանյան բանակների մի մասը Ատրպատականի վրայով Կովկաս անցավ: Սուրբ Թադեի պարիսպներին ապավինած մի բուռ հայությունը մի քանի շաբաթ դիմադրությունից հետո, վինամթերքի սպառման պատճառով անձնատուր եղավ: Տաճկական բանակները կոտորեցին բնակիչներին և կողոպտեցին վանքը:

Այդ թվականից, կարելի է ասել, լքվեց դարեր շարունակ իր գոյությունը պահպանած այս վանքը: 50-ական թվականներից վանքն ունի իր պահապանը, և ներկայիս վանքում են հաստատվել երկու հայ ընտանիքներ:

301 թվականին, քրիստոնեական կրոնի պետականությամբ, հայկական եկեղեցական ղեկավար դասի և հավատացյալ ժողովրդի հատուկ ուշադրության է արժանացել Թադեոս Առաքյալի նահատակության հետ ավանդաբար կապված այս մենաստանը ու դարձել Արտազի թեմի կենտրոն և ժողովրդի կողմից սիրված ուխտատեղի: Քրիստոնեական առաջին աղոթարանների կամ եկեղեցիների մի մասը կառուցվել են հեթանոսական տաճարների հիմքերի վրա, որպես նոր կրոնի հաղթանակի խորհրդանիշ: Հավանորեն Սուրբ Թադեի վայրում գոյություն է ունեցել հեթանոսական մի մեհյան, որի ավերակների վրա կառուցվել է այս մենաստանը: Սուրբ Թադեի վանքը ազգային և կրոնական տեսակետից արժեքավոր է նաև այն ավանդությամբ, ըստ որի այստեղ է պահպանվել Արտազ կամ Շավարշան դաշտի միջով հոսող Տղմուտ գետի ափին 451 թվականին զրադաշտական Իրանի դեմ պատերազմում նահատակված Վարդան Զորավարի աջ ձեռքի ճկույթը: Ազգային ու կրոնական այս երկու ավանդությունների շնորհիվ ամեն տարի հայ հավատացյալ ժողովուրդը մեծ խումբերով ուխտի են եկել այս վանքը, նրանից հոգևոր մխիթարություն ստացել ու նաև սրբտաբուխ նվերներով օգտակար եղել նրա պահպանման: